



Մ. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Ծր. 2 Հովտ.— Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Ս. Պատարագէն ետք Մայր Տաճարի ներքին զաւիթին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Երանաշնորհ Տ. Կիրէղ Բ. Պատրիարք Հօր շիրմին վրայ, խնդրանքովը հանգուցեալի քեռորդիին, որ հիւրաբար Ս. Երկիր կը գտնուէր:

* Կիր. 8 Հովտ.— Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

* Որ. 8 Հովտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտիներու Ս. Գէորգ եկեղեցին մէջ: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պալամեան:

* Ծր. 9 Հովտ.— Ս. Գէորգայ զօրավարին: Առատօտեան ժամերգութեան վերջին մասը պաշտուեցաւ Մայր Տաճարի ներքին զաւիթին մէջ, Ս. Գէորգի սեղանին դիմաց: Ապա, գլխաւորութեամբ Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պալամեանի, Միաբան Հայեր մեկնեցան Ղպտիներու Ս. Գէորգի վանքը, որուն եկեղեցին մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ: Ժամարարն էր Հոգշ. Հանդիսապետ Հայրը, որ քարոզեց օրոտան տօնելի տարին կեանքին ու հերոսական նահատակութեան մասին, բնաբան ունենալով օրոտան անտարանական ընթերցումէն՝ «Մի՛ զարհուրիք լալնցանէ որք սպանանեն զմարմին» (Ղկա. ԺԲ 4) հատուածը: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտիներու նոյն վանքի Հոգշ. Տեառնէն:

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով ժուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ մեր վերնատան մատուռին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 10 Հովտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին: Գիշերային և առատօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ապա Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Աճէմեան մատուց օրոտան հանդիսատր Ս. Պատարագը Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, «Եւ դրունք դժոխց

զնա մի՛ լաղթահարեացն» (Մտթ. ԺԶ. 18) քնաքանով քարոզեց, ներկայացրեցելով Ս. Էջմիածինը իրեն միջնաբերդը Հայ հաստաքին, և նախագահեց Ամենայն Հայոց Ս. Ս. Վազգէն Ա. Կաթողիկոսի օծման 21րդ տարեդարձին առթիւ կատարուած «Հայրապետական մաղթանք»ի արարողութեան:

* Ըր. 16 Հոկտ.— Ս. 72 աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին զաւիթին մէջ գտնուող Ս. Գէորգի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

— Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ ևս մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան: Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Աթոռոյ մայրապետներէն Աղանի Ծէվահիրճեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ:

* Կիր. 17 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան:

— Այսօր կատարուեցաւ Ռեմիէի Ս. Գէորգ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, շարքս մը ուշ իր առեւնէն, չխաչածնելու համար Վարազայ Ս. Խաչի տօնը: Պատարագեց Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան: Հանդիսութեանց նախագահեց տեղւոյն Տեսուչը՝ Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մամուկեան: Ներկայ էր բաւական թիւով ժողովուրդ՝ Երուսաղէմէն, Եաֆայէն և Հայֆայէն: Մատաղներ մորթուեցան և եղան մէկէ աւելի մկրտութիւններ:

* Ուր. 22 Հոկտ.— Թարգմանչաց հանդիսատր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Ծաֆէ Արքեպիսկոպոսի:

* Ըր. 23 Հոկտ.— Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօմ ազգային և եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուցեց Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան: Ապա, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ս. Աթոռիս և ազգիս հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիլիկեցեանի, իր տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի:

* Կիր. 24 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մամուկեան:

* Ըր. 30 Հոկտ.— Ս. Չորից Աւետարանչացն: Այս տարի ևս կարելի չեղաւ այս տօնին յատուկ Ս. Պատարագը մատուցանել Ս. Յարութեան զաւիթին վրայ քացուող մեր Ս. Յովհաննէս Աւետարանիչի մատուռին մէջ, Տաճարի նորոգութեանց պատճառաւ: Ի Ս. Գլխադիր պատարագեց Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Կիր. 31 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Բշ 1 Նոյ.— Ս. Յովսէփայ Աստուածաբօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագիչն էր, ընկալեալ սովորութեան համաձայն, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պալամեան:

* Ըր. 6 Նոյ.— Ս. Երկուտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

— Վաղուան Գիւտ Խաչի տօնին առիթով, կէսօրէ ետք ժամը 2.30ին, Գերշ. Տ. Ծաֆէ Արքեպս. Աճեմեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի

այրի ուխտերէն ետք, վերջինին կից՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբաւեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրաւելուն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառուարեան:

* Կիր. 7 Նոյ.— Գիտ Խաչ (326): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և, կերճ դադարէ մը ետք, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս թափօր, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Թափօրը նախ իջաւ Գիտ Խաչի այրը (որ մեր տրամադրութեան տակ դրուած էր 24 ժամեր շարունակ), ուր կատարուեցաւ Ս. Աւետարանի ընթերցում, և յետոյ քարծրանալով Ս. Գերեզմանին շրջափակը երիցս դարձաւ անոր շուրջ և մէկ անգամ Պատանաւտեղիին շուրջ: Ն. Ամենապատուութիւնը ամպհովանիի ներքեւ և Ս. Խաչափայտի մատունքն ի ձեռին կ'օրհնէր Տաճարէն ներս խոնոած հաւատացեալ ժողովուրդը և ուսանողութիւնը: Ս. Գերեզմանի կարգէն ետք երգուեցաւ «Խաչի քո Բրիստոս» և կատարուեցաւ խնկարկութիւն: Մեծաշուք այս հանդիսութիւնը ւարտեցաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ, երբ կէսօր էր գրեթէ:

* Ծր. 13 Նոյ.— Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Հակակառն Արդ. Մելգոնեան:

* Կիր. 14 Նոյ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուղին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

* Որ. 19 Նոյ.— Ս. Հրեշտակապետաց նախատօնակը պաշտուեցաւ համաճումն եկեղեցիին մէջ: Հանդիսաւելուն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէան:

* Ծր. 20 Նոյ.— Տօն Ս. Հրեշտակապետացն՝ Գաբրիէի և Միքայէի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տառուարեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռիս քարերարտօնի Աղանի Ճվահրիճեանի և պարագաներու հոգիներուն համար, որուն ւարտին Միաբանութիւնը պատուասիրուեցաւ վանքի Տեսչարանը՝ Տեսուչ Հոգ. Տ. Սևան Վրդ. Դարիպեանի կողմէ:

* Կիր. 21 Նոյ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

— Նոր Երաստաղմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ ալ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան:

* Ծր. 27 Նոյ.— Ս. Առաքելոցն՝ Անդրէի և Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Հակասեր Վրդ. Պալաւեան:

* Կիր. 28 Նոյ.— Բարեկէնդան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուղին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հակակառն Արդ. Մելգոնեան: Ս. Պատարագէն առաջ, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէան դարութեան և կիսասարկաւագութեան աստիճանները շնորհեց Ս. Յակոբեանց Մա:ր Տաճարի լուսարարի օգնական Տրց. Սիմոն Էրկիւնեանի, իսկ Ս. Պատարագի ընթացքին կատարեց անոր սարկաւագական ձեռնադրութիւնը: Յուզիչ էր պահը երբ ընծայեալը ձեռամբարձ կը դառնար ժողովուրդին՝ Աւագ Սեղանի բեմէն: Նորընծան անմիջապէս սկսաւ սպասարկել Ս. Խորհուրդին:

ՄԱՆՏՈՆԵՐ



* ԲԶ. 11 Հոկտ.— Կէսօրէ ետք, Հրէից Սուրբօթի (Տաղաարահարաց) տօնին առթիւ, Երուսաղէմի Վեմ. Քաղաքապետ Թէտի Քօլլէքի կողմէ Դատի Բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Դիւանապետ Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան, Ասագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Տիար Կ. Հինդլեան:

* ԲԶ. 1 Նոյ.— Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս ներկայ եղաւ Կոնսնից Նախարարութեան կողմէ, քաղաքս հիւրաբար գտնուող Չիլիի կարտինային ի պատիւ Մէրուզայէմ Փլագա պանդոկի մէջ տրուած ճաշկերոյթին:

* ԴԶ 3 Նոյ.— Սպանական ընդհ. Հիւպատոս Պր. Չուրուկա Տէ Փլագա պաշտօնով քաղաքէս մեկնելուն առիթով հրաժեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան:

* ԲԶ. 15 Նոյ.— Կէսօրէ առաջ, Դոմինիկեաններու եկեղեցիին մէջ, Ս. Յարութեան լատինաց բաժնի նորոգութեան ճարտարապետ Հ. Ծարլ Բուանցօնի լուղարկատրութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիրեղ Նպս. Գաբրիէան, Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Միլզոնեան և Տիար Գ. Հինդլեան:

Անցեալ Հոկտեմբեր ամսու ընթացքին, Ս. Էջմիածնի մէջ կատարուած Միտոնօրինքի հանդիսութիւններէն վերադարձին, Ս. Աթոռոյս հետեւեալ Միաբան հոգևորականները այցելեցին Երուսաղէմ:

7 Հոկտեմբեր, Հինգշաբթի օր, Ժամանեց Հարաւային Ամերիկայի Կաթողիկոսական Պատուիրակի փոխանորդ Հոգշ. Տ. Յարութիւն Ծ. Վրդ. Մուշեան և մեկնեցաւ շաբաթ մը ետք:

11 Հոկտեմբեր, Երկուշաբթի, Ալֆորվիլի (Ֆրանսա) Հոգևոր Հովիւ Հովիւ Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Թօփալեան, որ շուրջ երկու շաբաթներ մնաց Ս. Աթոռ:

14 Հոկտեմբեր, Հինգշաբթի, Հար. Ամերիկայի Կաթողիկոսական Պատուիրակ և Արժէնթինահայրութեան Առաջնորդ Գերշ. Տ. Բարզէն Արքեպս. Ապատեան, որ մնաց միայն երկու օրեր՝ վերադառնալէ առաջ իր պաշտօնավարը՝ Պուէնոս Այրէս:

Իսկ 19 Հոկտեմբերին, Երեքշաբթի օր, Իրաքի Կաթողիկոսական Պատուիրակ Գերշ. Տ. Ասողիկ Արքեպս. Ղազարեան ժամանեց քանի ժը օրերու այցելութեան համար:

Ատոնցմէ զատ, Նոյեմբեր 25, Հինգշաբթի երեկոյ Ս. Քաղաք ժամանեց Հիսիսային Ամերիկայի Արևելեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան և մեկնեցաւ Երկուշաբթի, 29 Նոյեմբերին: